ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/04

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.05.2017թ. «Տոպազ-95» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.05.2017թ. թիվ ԴՎԱ/326 գրության հիման վրա, 19.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տոպազ-95» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 10.05.2017թ. թիվ ԴՎԱ/1326 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացվել է հարցում՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ներկայացվում է վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամակացույցի վերաբերյալ, սակայն դեպարտամենտի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Տոպազ-95» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Տոպազ-95» ՍՊԸ-ն 25.05.2017թ. Խորհրդին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Տոպազ-95» ՍՊԸ-ն բարեխիղճ կերպով երկար տարիներ մասնակցել է գնումների գործընթացին, գործել է օրենքի շրջանակներում, երբևիցե որևէ բացթողում, ուշացում, պարտականությունների թերացում, ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորություններ չի ունեցել: Գնումների գործընթացին մասնակցության դեպքի ժամանակ արձանագրված խախտումն առաջինն է և միակը, որը տեղի է ունեցել թյուրիմացաբար, քանի որ համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի, 2017թ. 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճարը հաշվարկվել է 2015թ. շահութահարկի 18.75 տոկոսադրույքով, իսկ 2016թ. շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո բյուջեի հանդեպ առաջացած պարտքը դարձել է գերավճար:»:

Հաշվի առնելով վերոգրյալը Ընկերությունը Խորհրդին խնդրել է տեղի ունեցածը համարել թյուրիմացություն և օրենքի շրջանակներում կայացնել հնարավորինս մեղմ որոշում:

Ընկերությունը նշված գրությանը կից ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության կողմից 22.05.2017թ. տրամադրված՝ 30.03.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին թիվ 3697 տեղեկանքը:

Բողոքի քննության ընթացքում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն՝ Սուրեն Բաբանյանը և գլխավոր հաշվապահ՝ Հասմիկ Հանեսյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2017/04 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2017թ. գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը

(այսուհետ նաև՝ բողոք) և գրությանը կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 10.05.2017թ. թիվ ԴՎԱ/1326 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.03.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Կոմիտե) 20.04.2017թ. կատարված հարցումը, Կոմիտեի կողմից 26.04.2017թ. տրամադրված եզրակացությունը, «Տոպազ-95» ՍՊԸ-ի 25.05.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգի 50-րդ և 52-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Տոպազ-95» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Հանձնաժողովի 29.03.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության՝ ընթացակարգի գների ամփոփման N 1 Հավելվածի համաձայն՝ ընթացակարգի 52-րդ չափաբաժնով «Տոպազ-95» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես 2-րդ տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.3 կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին

ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 20.04.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ի՝ 24.03.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացություն:

Կոմիտեի կողմից 26.04.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տոպազ-95» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 505.564 (հինգ հարյուր հինգ հազար հինգ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

- 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհրդում 22.05.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի ժամանակ «Տոպազ-95» ՍՊԸ-ն տնօրեն՝ Սուրեն Բաբանյանը և գլխավոր հաշվապահ՝ Հասմիկ Հանեսյանը ընդունեցին այն փաստը, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել են ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն Խորհրդին խնդրեցին հաշվի առնել այն հանգամանքը, որ Ընկերությունը բարեխիղճ կերպով երկար տարիներ մասնակցել է գնումների գործընթացին, գործել է օրենքի շրջանակներում, երբևիցե որևէ բացթողում, ուշացում, պարտականությունների թերացում, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ չի ունեցել և արձանագրված խախտումն առաջինն է, որը տեղի է ունեցել թյուրիմացաբար, քանի որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ 2017թ. 1-ին եռամսյակի շահութահարկի կանխավճարը հաշվարկվել է 2015թ. շահութահարկի 18.75 տոկոսադրույքով, իսկ 2016թ. շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առաջացած ժամկետանց պարտավորությունը դարձել է գերավճար:

Ընկերությունը Խորհրդին 25.05.2017թ. ներկայացված գրավոր դիրքորոշմանը կից ներկայացրել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական կոմիտեի

Արաբկիրի հարկային տեսչության կողմից 22.05.2017թ. տրամադրված թիվ 3697 տեղեկանքը, որի համաձայն՝ 30.03.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերությունը չունի ժամկետանց պարտավորություններ, իսկ շահութահարկի մասով ունի 10.196.717 (տաս միլիոն հարյուր իննսուվեց հազար յոթ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ գերավճար (դեբետային մնացորդ):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Տոպազ-95» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 24.03.2017թ., դրությամբ ունեցել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով այն մասին, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Տոպազ-95» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված բողոքով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու

նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Տոպազ-95» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2017թ. «Տոպազ-95» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ